Չարենցավան համայնքի ղեկավար
պրն. Հ.Շահգալդյանին

ԶԵԿՈՒՑԱԳԻՐ

Հայտնում եմ ձեզ, որ Եվրամիության կողմից Արևելյան Գործընկերության երկրների համար իրականացվող EU4Culture նախագծի շրջանակում Չարենցավան համայնքի՝ «Չարենցավանի արդյունաբերական մշակութային ժառանգության և ստեղծարար տնտեսության վերաիմաստավորումը հետինդուստրիալ ժամանակներում. մշակութային զարգացման ռազմավարություն» ծրագրի ամբողջական ֆինանսավորումը կազմում է 30000 (երեսուն հազար) Եվրո, որը ԵՄ կողմից համայնքին հատկացվում է ՀՀ դրամի համարժեքով: Փոխանցման պահին փոխարժեքը կազմել է 550,68 (հինգ հարյուր հիսուն ամբողջ վաթսունութ հարյուրերորդական), դրամաշնորհի ամբողջական գումարը՝ 16.520.400 (տասնվեց միլիոն հինգ հարյուր քսան հազար չորս հարյուր) ՀՀ դրամ:

Նախատեսված ամբողջական գումարի 70%-ը (յոթանասուն տոկոսը)՝ 11.564.280 (տասնմեկ միլիոն հինգ հարյուր վաթսունչորս հազար երկու հարյուր ութսուն) ՀՀ դրամի չափով, 2021թ. դեկտեմբերին փոխանցվել է համայնքապետարանի համապատասխան արտաբյուջետային հաշվին:

Գումարի վերջնական 30%-ը (երեսուն տոկոսը) տրամադրվելու է ծրագրային ծախսերն ամբողջությամբ համայնքի կողմից կատարվելուց և հաշվետվությունների՝ դոնորի կողմից ընդունումից հետո, ծրագրի ավարտից (2022թ. մայիսի 31) 2 (երկու) ամսվա ընթացքում: Ուստի, ծրագրի պահանջներին համապատասխան, անհրաժեշտություն կա համայնքի բյուջեից կատարելու վերը նշված 30%-ին (երեսուն տոկոսին) համարժեք՝ 4.956.120 (չորս միլիոն ինը հարյուր հիսունվեց հազար մեկ հարյուր քսան) ՀՀ դրամի հատկացում վերոնշյալ արտաբյուջետային հաշվին:

Միաժամանակ հայտնում եմ, որ ծրագրում համայնքապետարանի գործընկեր և համահայտատու՝ «Մշակույթը հանուն կայուն զարգացման» հասարակական կազմակերպությանը, համաձայն 01.04.2022թ. կնքված N01 Գործընկերության համաձայնագրի, անհրաժեշտ է հատկացնել 13.585.000 (տասներեք միլիոն հինգ հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամ դրամաշնորհի, իսկ համայնքի կողմից դրամաշնորհային ծրագրի շրջանակում իրականացման ենթակա են հետևյալ ֆինանսական գործարքները, 2.935.400- (երկու միլիոն ինը հարյուր երեսունհինգ հազար չորս հարյուր) ՀՀ դրամի շրջանակում՝

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՍՏԱՑՎԱԾ է «08» 04 2022թ.
Մտից N 1464 Գործ N 21